



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

« 04 » փետրվարի 2019թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Ա. Ղուկասյանին

N 14

Հարգելի պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում Շենավան համայնքի ղեկավարի թիվ 02-Ա որոշումը:

Առդիր՝ 1/մեկ/թերթ:

Համայնքի ղեկավար՝



Ժ/Պ Ա. Դունամալյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շենավանի համայնքապետարան, գ.Շենավան
հեռ. 093-07-31-08

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 02-Ա

«04» փետրվարի 2019թ.

Շենավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու և լիազոր անձ նշանակելու մասին

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի - և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 29.08.2006թ. «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի օրինակելի աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 12-Ն հրամանի 1-ին գլխի 8-րդ կետի պահանջներով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Շենավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար(ծածկ.2.1-1) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար 2019 թվականի մարտի 7-ին, ժամը 15:00-ին անցկացնել մրցույթ:
2. Մրցույթի անցկացման մասին տալ հայտարարություն՝ <http://www.azdarar.am> հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և այդ մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել Լոռու մարզապետարանի աշխատակազմին:
3. Մրցույթային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ Գեղեցիկ Աթիկյանին:

Համայնքի ղեկավար



Ժ/Պ Ա. Դունամայրան